

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԿԵԱՆՔԸ

•

Իսկ վանքում ո՞վքեր են եղել Նարեկացու ուսուցիչները, ի՞նչպէս է կազմակերպուել Նարեկացու մտաւոր աշխարհը, այս հարգերին որոշ պատասխան մեզ տալիս է «Յայսմաւուրքը»։ Այս ոսուրբն Գրիգոր վարդապետն ի վանս Նարեկայ։ Մնեալ և վարժեալ ինքն և եղբայրն իւր Յովանէս առ Երջանիկ վարդապետն Անանիա որ էր հօր եղբայր մօրն Գրիգորի և Յովանիսի Զորս առեալ էր վարդապետն Անանիա ի վանս Նարեկայ առ իւր հարազատ որդին և եղբօր գստերն իւրոյ, և ուսուցեալ զուսումն աստուածային գրոց անյագ բաղձանօք¹⁾։ Ուրեմն Նարեկացու անմիջական ուսուցիչն է եղել վանքի վանահայր և դպրոցի հիմնադիր Անանիան, որն իր ժամանակի նշանաւոր զիտուն մարդկանցից մէկն էր։

Թէպէտ Անանիայից մեզ քիչ զործեր են հասել, բայց ժամանակակիցների արտայատած կարծիքներից պարզ երեւում է նրա՝ իրբն ուսումնականի վայելած պատիւն ու հեղինակութիւնը։ Առանձնապէս ուշագրաւ են պատմիչ Ուխտանէս եպիսկոպոս Սեբաստացու՝ Անանիային ուղղած գնահատական-ներբողական խօսքերը իր զրած պատմութեան ներած ականում։ Ուխ-

տանէսը, որ իր Պատմութեան գիրքը գրել է Անանիայի յանձնարարութեամբ, ներածականում մի զարմանալի երկիւղած և յարգալիր վերաբերմունք է հանդէս բերու Անանիայի նկատմամբ՝ չնայած ինքը հպիսկոպոս է, ըստ երեսոյթին նա Անանիայի հետ յաճախակի հանդիպումներ և զրոյցներ է ունեցել իր գրելիք պատմութեան նիւթի չուրջը, ապա յետոյ համաձայնուել է կատարել այդ գործը, որի համար ասում է. սԱրդ սկսայց այսուհետեւ՝ սկիպրն դնելով զոէր և զիտնարհութիւն՝ վայել է քում սրբութեանդ և պարկեցած վարուցդ՝ ով պատուական զլուխ և պատկանելի, զի իրք ընդ հայելի հայելով ի քեզ տեսանեմք զամենայն բարեկարգութեան ձեւ և նմանութիւն և իր և օրինակ»²⁾։

Անանիայի նկատմամբ Ուխտանէսի ունեցած շատ բարձր ու զրական կարծիքը միաժամանակ լոյս է սփոռում մի բաւական մութ մնացած հարցի վրայ։ Բանասիրութեան մէջ կան կարծիքներ, որ Անանիա Մոկացի կաթողիկոսի կասկածները Անանիա Նարեկացու թոնզրակեցիներին յարած լինելու մասին գուցէ և անհիմն չեն եղել, որովհետեւ վերջինս կաթողիկոսի պահանջով թոնզրակեցիների զէմ զրած իր խոստովանագրում ասում է, թէ ինքը հիւանդ լինելով՝ հարկից ստիպուած է զրել այդ։ Բայց Անանիայի այդ արտայայտութիւնը ըստ էռութեան այնքան էլ հիմք չի տալիս նման կարծիքի, որովհետեւ, հակառակը, նա շատ

¹⁾ Գիրք, որ կոչի Այսմաւուրք, կ. Պոլիս, 1730, էջ ԴՃՂԴ (394)։

²⁾ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն, Վաշարշապատ, 1871, էջ 3։

տաքսեայ գորգով մը ծածկուած գահու մը վրայ բազմեցաւ. իր աջ կողմը, յեցակի մը վրայ նստած էին չորս արքեպիսկոպոսներ։ Արարողութիւնները հանդիսաւորապէս կատարեց արքեպիսկոպոս մը, որուն քով երկու եպիսկոպոս կար։ Արարողութեանը վըրայ պիտի խօսիմ Հայոց կրօնքին վրայ խօսելու ատեն։ Հայրապետը յետոյ թագաւորին և Օրէանի դուքսին համար աղօթել տուաւ. յետոյ արքեպիսկոպոսը աւետարա-

նը, զոր կարդացած էր, համբուրել տուաւ հայրապետին, արքեպիսկոպոսներուն, հպիտուկոպոսներուն և համայն ժողովուրդին։ Այդ զիրքին կողքերէն մէկուն վրայ ընդելուզեալ մասունքներ կային թիւրեղի մը տակ, և զիրքին այս կողմն էր որ համբուրել կուտար։ Արարողութիւնը վերջանալէ ետք հայրապետը օրհնեց ժողովուրդը. շտամբը ձեռքերը համբուրեցին, և յետոյ, ամէն մարդ մեկնեցաւ։

Թարգմ. Ժաններէն բնագրէն

ԺԱՆ-ՊԱԹԻՍԹ ԹԱՎԵՐՆԻԼ

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՏՎԱՆ

զայրացած է կաթողիկոսի դէմ և անկամ է գրել իր խոստովանագիրը ոչ թէ այն պատճառով, որ իրօք եղել է ազանդաւոր, այլ այն պատճառով, որ այդպիսին չլինելով՝ խիստ վիրաւորուած է զգացել իրեն, որ կասկածուել է այդ բանի մէջ և ստիպուած է եղել կասկածները փարատելու համար գրել իր ուղղափառութեան մասին:

Անանիան սՊիր խոստովանութեան մի սկզբում խորապէս դառնացած՝ բողոքով դիմում է կաթողիկոսին, թէ ինչպէս՝ նա չնայած իրենց ոնախանարք և գաւառուած, սազգաւ և ախորժակովք, զարժիւք և կենացութեամբ, միանման կեանքին և անցեալին, պահանջել է իրենից իր հաւասարի հաւատքի մասին գրաւոր յայտարարութիւն։ Ուխտանէսի զքքի երկրորդ մասը, որ վերաբերում է հայոց և վրաց եկեղեցիների անջատման պատմութեանը, ցոյց է տալիս նրա հեղինակի քազկեդոնականութեան համոզուած հակառակորդ և հայ եկեղեցու գաւանանքի պաշտպան լինելը։ Հետեւարար, քանի որ այդ զիրքը գրուած է Անանիայի ծրագրով ու յանձնարարութեամբ, և Անանիան վայելում է հեղինակի ամենաջերմ համակրանքը՝ ուստի դա էլ ապացուցում է, որ նա, այնուամենայնիւ չէր անցել բացայայտ աղանդաւութեան։

Ուխտանէսի՝ Անանիային տուած բնութագրին նայելով երեւում է, որ նա հուսանաբար միստիկ էր կամ ունէր միստիկ հակումներ. և իսկ գու կենդանախարուկեալ քոյին սուրբ և պարկեշտ վարուք և յարագնեալ խստակիր վշտաբերութեամբ . . .¹⁾ արտայայտութիւններով՝ ներած ականում մի տեղ դիմում է նրան պատմիչը։ Իրեւ միստիկ, Անանիան կարող էր քննադատական վիրաբերմունք ունենալ եկեղեցականութեան նկատմամբ, որը զսպէլու նպատակաւ, այն ժամանակ (թոնդրակեցիների պայքարի ծաւալման պայմաններում) կաթողիկոսի կողմից հեշտութեամբ որակուել է որպէս հնարաւոր աղանդաւորութեան արտայայտութիւն։ Յետագայում ճիշտ այդպիսի վերաբերմունքի է հանդիպել նաև Գրիգոր Նարեկացին։

Դանքում՝ ուսման տարիներին Նարեկացու հոգեւոր կեանքը կազմակերպողը եղել է ստիեգերական վարդապետու Անանիան։ Անշուշտ Նարեկացին Նարեկում ստացել է այն բոլորը, ինչ որ կարող էին տալ Ժ. Դարի ամենաառաջաւոր դպրոցները։ Իսկ զա ամենից առաջ ինքնուրոյն թէ թարգմանական կրօնական ու փիլիսոփայական ահագին զրականութեան ամենալայն իւրացումն ու ծանօթութիւնն էր։ Մեզ ոչ մի տեղեկութիւն չի մնացել այն մասին, թէ Նարեկացին արդեօք սովորութիւնը է օտար լեզուներ։ Ենելով այն փաստից, որ նա իր անունը և մի քանի այլ անուններ որոշ առթներով ստուգաբանել է իրեւ յունարէն բառեր (Պրիգոր-արթուր, հակող, Մտեփանոս-պատկ և այլն), ենթազրուել է, որ նա իմացել է յունարէն լեզուն։

Նարեկացու վանական կեանքը թէպէտ հարուստ չէ բազմազան դէպքերով, բայց, այնուամենայնիւ, չպէտք է կարծել, որ այն անցել է խաղաղ ու հանդարս՝ առանց ալեկոծ ութիւնների և ներքին ցնցումների։ Վերածնութեան սկզբնաւորման այդ զարաշընուում, երբ գնալով ուժեղանում էր պայքարը ֆեոդալական եկեղեցու դէմ, երբ եկեղեցին էր իր հերթին դաժանօրէն հաշիւ էր տեսնում իր հակառակորդների հետ, շատերն էին կասկածւում և մեզադրուում աղանդաւորութեան մէջ ու ենթակեւում հաւած անքների։ Նարեկացին նոյնպէս զերծ չի մնում կասկածների ու հալածանքների ենթակայ լինելուց։ Նա ևս մեղադրուում է իրեւ թոնդրակեցութեան մասնակցի։ Այս առթիւ և Յայնմաւուրք սիմէջ շատ զգուշաւոր ձեւով գրուած է հետեւեալը։ «Եւ զի ջան և փոյթ էր սրբոյն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զեղծեալ և անփոյթ արարեալ կարգս եկեղեցւոյ սրբոյ ի ծուլից և ի մարմասէր առաջնորդաց կամէր հաստատել և վերստին նորոգել։ Վասն որոյ այպանէին զնա բիրտ և սովորաբիկ և համբաւէին զնա ծայթ»²⁾։ Արա համար մի վայր են հաւաքւում եւ պիսկոպուներ և իշխաններ, աղանդեր և տանուտերեր, որպէսպի Նարեկացուն հրապարակով յանդիմաննեն և ապա աքսորեն

¹⁾ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն, Վարչապատ, 1871։

²⁾ Գիրք, որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 391։

ռզնաւ պատուհասիւ որպէս զհերձուածող»:

Այս գէպքի յիշատակութիւնը միանցամայն պարզ ցոյց է տալիս, որ նարեկացու գործունէութիւնը՝ եկեղեցու զէմուզզուած քննադատութիւնը աղանդաւորական բնույթ չի ունեցել (որովհետև անմիջականօրէն եկեղեցին նա չի ժխտել), այլ, ինչպէս հաւանաբար Անանիւցինն էր, եղել է միստիկայի ելակէտներից: Այդ ըստ ջանում միստիցիզմը նմանապէս ֆեոզականութեան ու պայքարի արտարայտութիւններից մէկն էր, որը սովորաբար նախապատարատում էր անցումը զէպի աղանդաւորութիւնը, ուստի շատ բնական է, որ նարեկացու հակառակորդները նրան իրեւ ներձուածող ներկայացնելով՝ դատել ու պատժել ցանկացին:

Մեզ ոչինչ ասոյիք յայտնի չէ, թէ ինչպէս է նարեկացուն յաջողուել աղանդուել իր համար կազմուած դատարանին ներկայանալուց. կամ եթէ ներկայացել է, ինչպէս է արգարացել: Այս զէպքի չուրջը մնացել են միայն ժողովրդական ծագում ունեցող հրաշքներ, որոնցից մէկը անցել է ռՅայսմաւրութիւնի կենսագրականի մէջ: Բայց հրաշքների, երբ կազմուած դատարանի կողմից երկու պատուիրակներ են գալիս նարեկացուն տանելու՝ նա նրանց ընդունում է առանց թշնամունքի և հրափրում է հացի ու տաշնելն է դնում երկու խորոված աղանդի: Պատուիրակները սակայն նկատում են, որ օրը ուրբաթ է (պատ է) և իրենք չեն կարող աղանդիները ճաշակել. այն ժամանակ նարեկացին ներողութիւն է խնդրում իր մռացելուութեան համար և առում է իր հիւրերին, որ հրաման տան աղանդիներին թուչելու: Նրանք այդ չեն կարողանում անել, այն ժամանակ նարեկացին է հրամայում, և աղանդիները թե առնելով թուչում են: Եկարները հրաշքը տիսնելով սարսափած և ամօթահար եղած հեռանում են, և այդպիսով դատը չի կայանում:

Այս, ինչպէս և շատ ուրիշ հրաշքներ, որ պատճում են նարեկացու մասին, առ պացուցում են երկու բան: Նախ՝ այն, որ բանաստեղծը, ինչպէս ինքն էլ է վկայում, իր կենդանութեան օրով իսկ ժողովրդի մէջ հոչակուած ու սիրուած է եղել իրեւ հրաշագործ և այդ անշուշտ հենց իր միստիկ

լինելու պատճառով¹⁾: Այնուհետեւ՝ այն, որ պատմական ճշմարտութիւնն է պաշտօնական եկեղեցականութեան կողմից նրա հետապնդուելը: Այս վերջինն հանգամանքի կապակցութեամբ ժողովուրդը շատ չեւտուած կերպով արտայայտել է սիրած անձնաւորութեան հակառակորդների նկատմամբ իր հեգնանքն ու հակակրանքը: Ահա նարեկացու հրաշագործութիւնների մասին պատմող ժողովրդական վիպերգների մէկի մի հատուածը, որն ըստ երեւոյթին վերցյլչեալ երկու պատուիրակների գալստեան զէպքի բանաստեղծական արտացոլման մի այլ տարրերակն է հանգիստանում:

Երկու վարդապետ կին կէօ Սիս Ռէրինը բարձր ին բանի բեանց Մասիս կան չափելի ջուր լցուցին Ասածոյ շնորրով դադրցուցին Նարեկացուն օրօղիեցին: Մենք էլ ախանը ուր բարտմաթ Շառաւ կելնեմ Նարեկացուն: Իրենց օրօղկած չափելի ջուր փոխեց Գզած բամբակ ուր ժեռը բանեց Վառավի կրակ մէջ փաթութեց Չափելի ջրի մլչն լլ դրեց Վարդապետացն էլ օրօղիեց: Վարդապետներ որ էն տեսան ինոնր ինտեղ շատ զարմացան Էրբանը տեսնենը Նարեկացին: Եկան խասան Նարեկ սարին Ճրշչուակ խապար տվակ Նարեկացուն: Ջյօ վարդապետը Էկան բքը խոր Շառաւ կելնեմ Նարեկացուն: Ղեղար զիսէն Էլ վեր ի տիր: Խովուովու թեապանակ առեց թեւին Գնաց խասաւ մէջ ուր սարին Էկաւ զիմաց ջուխտ վարդապետին Աջն առեց ջուխտ վարդապետին: Վարդապետներ ջուր ուզեցին Շառաւ կելնեմ Էն խովուուն Խաչակինը բեց վեր Էն սարին Գաւզար իզար վեր չոր քարին Ջուր բղիսցուց բարի մլչն: Առաւ խմցուց վարդապետաց Շեր սիփատկ մուրունին ճանիլացաւ Էնոնր ինտեղ շատ զարմացան Շառաւ կելնեմ Նարեկացուն²⁾:

Այն ենթադրութիւնները, որ իրը թէ

¹⁾ Բնաւ պատահական չէ. որ եկեղեցական խուեց զուրօ եկած միջնադարի մեր զրողներից միայն նարեկացու մասին են ստեղծուել ժողովրդական վիպական երգերը:

²⁾ Լումա. Թիֆլիս, 1899, թ. զիրք.

Նարեկացին կարող էր իրօք ազանդաւոր եղած լինել, բայց յետոյ զգչացած ու հրաժարուած, որնէ լուրջ հիմք չունեն: Այս բովանդակութեամբ՝ իրօք, մի քանի յիշատակութիւն կայ իր մասին «Ողբերգութեան մատեան»ի մէջ, այսպէս՝ ՀԵ զլիսում (որի՝ հեղինակին պատկանելը գեռ զինելի է) զրում է, որ տարուելով հերձուածողական չարափառութեամբ, արտաքսուել է զրախտից, բայց այդմ ուղիղ և ամբիծ գաւանանքով նորից պիտի բարձրանայ երկինք: Առկայն այս և նման այլ արտայայտութիւնները գտուար է անպայման ինքնակենսագրական զեղումներ համարել նկատի առնելով միտուցիզմով պայմանաւորուած Աղղբերգութեան մատեանից ընդհանուր օճի կողմերից մէկը՝ այն, որ բանաստեղծը իր այդ պոէմում, առհասարակ, անթիւ անհամար զանազան տեսակ յանցագործութիւններ էլ է զերազում ինքն իրեն, որոնք երբեք չէին կարող իրական - կենսագրական լինել:

Նարեկացու ազանդաւոր լինելու հաւանականութեան համար իրբեք փաստ բերւում է նաև այն, որ նրա դաստիարակ Անանիան կասկածուել է թոնդրակեցիութեան մէջ, իսկ հայրը՝ Խոսրով Անձնացիաց եպիսկոպոսը բանագրուել է իրբեք հերձուածող: Ինչ զերաբերում է Անանիային, այդ մասին զերեւում խօսուեց արդէն: Իսկ Խոսրովի մասին պէտք է ասել հետեւալը: Խոսրովին ծեր հասակում Անձնացիաց թեմի եպիսկոպոս է նշանակում Անանիա Մոկացին, սակայն շատ չանցած՝ 953 թուին Խոսրովը ապստամբում է նրանից: Բայց ի՞նչ տեսակ ապստամբութիւն էր զա: արդեօք թոնդրակեցիական, հաւանաբար՝ ոչ: որովհետև ըստ պատմիչների տուած տեղեկութիւնների՝ ապստամբութեան մէջ նրա համախոհը, նոյնիսկ զբդիչը եղել է Արևեաց Յակոբ եպիսկոպոսը, իսկ Յակոբի մասին, նայելով Օքէլեանի թողած շատ մանրամասն տեղեկութիւններին, հաստատապէս կարելի է ասել, որ թոնդրակեցի չէր: Անկախ այս բոլորից, միննոյն է, եթէ Նարեկացու հայրը և դաստիարակը թոնդրակեցիներ էլ լինէին, այդ գեռ չի կարող զիտական հիմք լինել նրա ազանդաւորութեան ապացուցման:

Այսպիսով, թէե ըստ երեսյթին նա-

րեկացու դէմ (թեկուզ կեանքի զերջին չըջանում նրա արդէն ձեւաւրուած միտոիկ լինելու պատճառով) լարուած մարդիկ նրան մեղադրել են հերձուածողութեան մէջ, բայց այդ մեղադրանքի հիմնաւոր լինելը ընդունելու համար այսօր դեռ ոչ մի լուրջ փաստ չունենք: Ընդհակառակը, կայ փաստ, որ նա՝ ազանդաւորութեանը յարած կամքա վանքի վանահօրը նամակէ է գրել՝ ուղղուած թոնդրակեցիների ուսումնակից: Այս միայն բացառուած չէր, այլ նոյնիսկ անհաւանական չէր, որ, թերես, նարեկացին հետագայում միստիկայից անցներ ազանդաւորութեանը, բայց, ինչպէս յայտնի է, համար միտուիկական պոէմ Աղղբերգութեան մատեանը աւարտեալուց շատ չանցած՝ վախճանուեց: Ուրիշ բան է, ի հարկէ, այն, որ ազանդաւորական չարգումների հետեւանքով ժամանակակից առաջացած աշխարհիկ-հռումանիստական տրամադրութիւնները, ինչպէս պիտի տեսնենք, իրենց որոշակի բրացուումների հն գտել նրա ստեղծագործութիւնների մէջ: Իր ժամանակի Տանթէն թէպէտ աղանդաւոր չէր: բայց նոյն այդ ազանդաւորութեան չնորին հասարակութեան մէջ առաջացած նոր տրամադրութիւններն ու պատկերացումներն արտայայտող առաջին մեծ բանաստեղծը հանգիստացաւ Եւրոպայում:

Նարեկացուց մեացել է բաւական հարուստ զբական ժառանգութիւն, ինչ որ նրա երկերից թուարկուած են հնագոյն ձեռագիր կենսագրականում, դրանք բոլորն չէ հասել են մեզ և դեռ աւելին: Այդ երկերն են՝ ԱՄԿնութիւն երգոց երգոյն Առզումնիք, «Ծիշատակագրութիւն պատմութեան ամենազօր նշանի տառուածեան խաչին», որ ի զերուստ ամենահայեաց նախատեսն ակնարկութենէ ի սոտրին կողմաց կայից աշխարհի ազգացն Յունաց քերեալ հանգուցաւ ի սահմանս վայրից զաւարին Մոկաց, ի շինուած բնակութեան ուսիսին սրբութեան, որ կոչի Սպարանքն, որպան առնթեր երկու ներբող նույիրուած Ս. Խոչին և Աստուածածնին, ուրիշ երկու ներբող առանձին՝ նույիրուած առաքեալներին և Յակոբ Մծրնայ եպիսկոպոսին, «Գանձ ի գալուստ Սուրբ Հոգւոյն», «Գանձ ի սուրբ հեղինեցի», «Գանձ ի սուրբ խաչն աստուածընկալ», «Տաղք» (թուով 25ից աւելի),

ոլլատիկան ողբերգութեան» և «Թուղթի ի հոյակապ ուխտն կճավայ, զան կարծեացն անիծելոց թռնրակեաց Յանէսի և Յամբէսի թացի սրանցից Նարեկացուն վերագրուել են նաև մի քանի քանաստեղծական այլ գործեր, դաւանաբանական ճառեր և մեկնաբանական զրուած քներ, որոնք քանասիրութեան կողմից իրաւացիօրէն համարուել են հեղինակին անհարազատ, որովհետեւ զրանց գրութեան ոճը բոլորովին նման չէ Նարեկացու ոճին և զրանց Նարեկացունը լինելու մասին ոչ մի լիշտակութիւն չկայ ոչ նրա կենսագրականներում և ոչ պատմագիրների գործերում:

Ե՞րբուանից է սկսում և ո՞րքան է տեղը
Նարեկացու ստեղծագործական կեանքը:
Եթէ նկատի առնենք, որ բանաստեղծի
մեզ հասած գործերից (յիշատակարաններ-
ուում նշուած թուականներին նայելով) ա-
ռաջինը «Երգ Երգոցի» մեկնութիւնն է,
գրուած քսանվեց տարեկան հասակում՝
977 թուին, իսկ զերծինը «Ողբերգութեան
մատեաննու է», գրուած 1002 թուին, ապա
կը ստացուի, որ նրա գրական ստեղծագոր-
ծական կեանքը տեղը է մօտաւորապէս
քսանհինգ տարի: Նա իրբե զրոյ և բանաս-
տեղծ հետք հետէ աճել է և վախճանուել
իր ուժերի ծաղկման գագաթնակէտին:

Նարեկացու զբական հոչակը սկսել է
նրա կենցանութեան օրով, և ժամանակի
ընթացքում հետզետէ մեծացել է։ Մեր
պատմիչները յաճախ են նրա մասին խօսել՝
արտայատենազ սէլն ու հրացմունքը։
Այսպէս՝ Սամուել Անեցին, Սմբատ Բ. Ք.
Թագւորութեան տարիների կարեռը եղեւ-
լութիւնների մասին պատմենով, զրել է։
ՅԵաւուրս յայսոսիկ փայլէր իրքն զարե-
գակն խմասութեամբ . . . Պրիգոր Նարե-
կացին՝ որ ի Հայք ի գաւառն Վասպուրա-
կան՝ որդի Տիգան Խորրովու՛ Անձեւ ացեաց
և պիսկոպոսին»²⁾։

1140

(Gurmukhi 2)

ԵՐԱԺԾՎԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻԶՆԱԴՐԵԱՆ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

24.

ԵՐԱԺԻՇՏ ՄԱՆՈՒԵԼ

Ակների պատմական վանքի հպարտութիւնն է կազմում մի լաւագոյն արուեստագէտ, որ գեռ 13րդ դարում, մենաստանի կամարների ներքոյ զարկ է տալիս հայ երաժշտական արուեստին։ Դա իր զարացըրջանում սիրուած ու յարգուած օիմաստուն» արուեստագէտ Մանուկին է, որ իր ժամանակի վաստակաւոր երաժշտագէտների շարքում ունի իր ուրբոյն էջը։ Նա իր գեղարուեստական գործունեութեամբ Ակների մենաստանի միաբանների և իր միջավայրի երաժշտասէրների հոգիների վրայ խոր և անմոռանալի տպաւորութիւն է թողնում։ Թերեւո այդ երեւոյթով էլ պիտի բացատրել, որ գեռ 1333 թուրին Ակների վաստակաւոր զրիչ Սարգիս կրօնաւորը, նրա յիշտատակը վառ պահելու համար, զրում է մի երգաբան։ Ահա զրչի վկայութիւնը . . . Պընցաւ երգաբանն ի թվ։ Հայոց ԶԶԲ (1333) ձեռամբ անարհեստ զրչի Սարգիս . . . կրանաւորի . . . ի յիշտատակ շնորհալի քահանաւորի Մանուկին»։

Այս վաստակաւոր երաժիշտն իր լաւագոյնը նույիրում է նաև հայ զրչական արուեստի զարգացման գործին։ Նա է, որ Արքայակաղինում Պօղոս կրօնաւորի զրչով զրուած Թէոփիլոսի ներբողեանց յունաբէնից թարգմանուած ճառի ձեռագիրը, իր ուսերի վրայ զրած, բերում է յայերկնանման սուրբ և աստուածաբնակ անապատնի յլկներն, առ լուսազգիստ ուռը և երջանիկ հայրն Ստեփանոս։ Ահա յիշատակարանի տողերը. «... Եւ ես լսու իմում կարի, — զրում է Պօղոս զրիչը, — զրեցի և առաքեցի։ Եւ աղերսալի պաղատանաւք աղաչեմ ո՛վ սրովք բանման դասք լուսերամից, յիշեսջիք աղաւթիւք զատութիւք զատուածապատեալ հայրն զլատեփանոս, զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատին։ Ա

¹⁾ Սամուել Անեցի, Հաւաքմունք ի զբոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103.